



ՏՆՕՐԻՆ-ԽՄԲԱԳԻՐ Վ. ՓԱՓԱԶԵԱՆ


Թ. ՏԱՐԻ ԹԻՒ 50

ՀԱՅԵՐԱԳԻՏԱԿԱՆ ՇԱՔԱՐԱԹԵՐԹ

11 ՕԳՈՍՏՈՍ 1907

Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ

Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ



Ջ Ե Ն Ի Թ

ՄԵԾ ՄՐՑԱՆԱԿ ԲԱՐԻՋ, 1900

ԱՌԱՋԻՆ ՄՐՑԱՆԱԿ. — Նեոստրիի դիտարանին. 1903

ԱՐՑԱՔՈՅ ՄՐՑԱՆԱԿ. — Սեդախովի ժամանակ. 1906

ԵՆՆ. ԵՆՆ. ԵՆՆ.

ԱՄԷՆ ՄԵՏԱՂԷ ՆԻ ԱՄԷՆ ՄԵԾՈՒԹԵԱՄԻ.

ԸՆԴՀ. ՆԵՐԿԱՅԱՌՈՒՄԻՋԻ ԹՈՒՐԿԻՈՅ ՀԱՄԱՐ,

Գ. ՄԱՐԳԱՐԻՍԻԱՆ ՆԻ ԸՆԿ.

Մեծ վաճառատուն ժամացույցներու, շրջա-
ներու եւ գոհարեղեններու

ԹԻՒ 16 = ՊԱՅՃԷ-ԳԱՐՈՒ = ԹԻՒ 16

Օռոկտի-Պաք հաստատութեան գիմարը

Ի Բերա, Կ'դանուի գոհարաւաճառ Տ. Տ. ԷՄԵԼԻՃԵԱՆ ՆԳԱՐՑ ԳՈՐԾ,

ԹԻՒ 400 ՄԵԾ-ԽՈՂՈՅ.

Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ


ՓՎՂԳՆ ՓՎՂԳՆ ՓՎՂԳՆ ՓՎՂԳՆ ՓՎՂԳՆ ՓՎՂԳՆ ՓՎՂԳՆ

(آ. آصاڤوربان) شرکت صرطیه مطبعه سی — باب عالی حاده سنه ۱۳۲۷

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Թ. ԱՍՍՏՈՒՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պաշր-Ալի հասկսի քիւ 52

Հատը 40 փարս



Ձեռնի, ոտի ու ոտի եւ ձեռնի
լիսանգամայն մեքենաներ
կը գտնուին

Անկարելի է որ ընտանիք մը առանց կտրի մեքենայի մնայ,
բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ
մեքենայ մը անթիւ և անհամար ծառայութիւններ կը մատու-
ցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց
եւ տաղաւակի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ գիտէ թէ՝

Ս Ի Ն Կ Է Ռ

ՀԱՅՐԱՅՐԻՑ ԿԱՅՍ. ՓԱՆՏՈՆ

THE SINGER

MANUFACTURING COMPANY



մեքենան լաւագոյն է. սոյն մեքենան ամենէն կտարի լաւագործութեամբ,
հաստատունը եւ դիւրագործելին ըլլալուն բովանդակ աշխարհի

մէջ՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը գտնէ:

Սինկերի մեքենաները կը ծախուին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ:

ՎԵՐԱԳՈՐԾՆԵՐ
ՇԱՐՋԱՆԿԱՆ

- | | |
|--------|--|
| ԲԵՐԱ | (1. Մեծ փողոց, Պոն Մարշէի դէմ, թիւ 343 եւ 343 կրկին . |
| | (2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ. |
| ԿԱԼԱԹԱ | (1. Սինկեր խան, Թիւնէլի ետեւը. |
| | (2. Գարաքէօյ, Թրամվէյի կայարանին դէմ. |
| ՊՈԼԻՍ | (1. Սուլթան համամ . |
| | (2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, թիւ 13 . |
| ՍԿԻՏԱՐ | Զարչը Պօյու, թիւ 120 . |

Կատարեալ երաւեսաւորութիւն

Մասնաձիւղեր գաւառներու բոլոր ֆաղափներու մէջ:

Սինկերի Ընկերութեան Կեդր. վարչատեղին՝ կը գտնուի Բերա, Մեծ փողոց, թիւ 343 և
343 կրկին, Տիւզօղլուի տունը:

Հ Ա Ն Ր Ա Գ Ի Տ Ա Կ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԾԱԲԱԹԱԹԵՐԹ

16 ՄԵԾԱԴԻՐ ԷԶԵՐՈՎ ԵՒ ՃՈՒ ՊԱՏԿԵՐՆԵՐՈՎ ՀԱՄԵՄՈՒՄԸ

Կ. Պոլսոյ համար ստեղծան բաժնեգին	50 դր.	Վեցամսեայ	25 դր.
Գաւառաց համար	»	»	27 »
Արսասահման	»	»	6 Ֆր.

Կ Ա Ն Ի Ի Կ

ՀԱՍՅԷ՝

ՎԱՀԱՆ ՓԱՓԱՋԵԱՆ, Պապը-Ալի հասէսի Ասատուեան տպարան քիւ 52.

Գաւառներու մէջ գործախախտներ կը փնտռուի, պայմանաւ որ երաշխաւոր մը ցոյց տան և
թէ միշտ նոր բաժանորդներու անունին և հասցէին կցեն նաեւ բաժնեգրինները:

Դրամները պէտք է ղրկուին կամ Օսմ. Մանտաքօսթով և կամ բօսթայի փուլով 20 հատը
20 ղրուշի հաշուով:



ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ — ՂԱՀԱՆ ՓԱՓԱՋԵԱՆ

ԺԱ. ՏԱՐԻ ԹԻԻ 50

ՇԱՐԱՐ

11 ՕԳՈՍՏՈՍ 1907

ԻՆԹԵՌՎԻԻ ՄԸ Յ. ՍԻՆԱՆԵԱՆԻ ՀԵՏ

Հսին թէ Յարութիւն Սինանեան, ծանօթ երգահան բարեկամս հրաւիրուած ըլլալով Թարապիա, Սրմսր-Բէլիսի Տնօրէնութեան կողմէ, որպէս զի մասնագէտներէ ընտիր խումբ մը կազմելով՝ գայնուագէտ պարտէզը, գոհացում տալու համար corop sdipomatiqueէն զատ՝ ամբողջ Վոսիորարնակ Հայ-Լայն գաւաակարգին, ուստի փափաքեցայ լսել զինք մօտէն ու վայելել իր արուեստագիտական causerieն, որ այնքան լաւ գիտէ պարզել։

Իմ նպատակս էր ինչ ինչ նիւթերու վրայ իր գաղափարը առնել ու պարզել մեր ընթերցողներուն։

Կիրակի իրինկուն գացի զինքը տեսնել, և որովհետեւ քիչ մը առեն ունէր դեռ սկսած չուէր նուագը, ուստի տասը վայրկեանի չափ tête-à-tête մը ունեցանք, որ ահա՝

— Լրագիրներէն կը տեղեկանանք թէ, դուք ալ կ'անդամակցիք եռաձայնի Գննիչ Յանձնաժողովին, կրնամ ձեր կարծիքը առ-

նել եռաձայնի կազմութեան և անոր արուեստական ներութեանց վրայ։

— Այո՛, եռաձայնի Գննիչ Յանձնաժողովին անդամակցելէ առաջ, կարծեմ թէ տեսաք և լսեցիք իմ օժանդակութիւնս և լուծած աշխատութիւններս այդ մասին։

— Ի՞նչ կարծիք ունիք եռաձայնի մասին։

— Սկզբմամբ համակարծիք եմ անոր, և փափաքելի է որ կանոնաւոր եռաձայն մը վաւերացուի պատկանեալ ժողովէն և երգութիւն առհասարակ ամբողջ հայ եկեղեցիներուն մէջ, ատով, անգամ մ'ընդ միշտ կրօնական սրբաղան երգեցողութիւնք սանձուած պիտի ըլլան և ամէն դպրապետ իր սիրած ու սովորած եղանակը չպիտի կրնայ քչել աս կամ այն եկեղեցիին մէջ։

— Շատ լաւ, Զիւրիկիբեանի եռաձայնը, որուն դուք ալ կը մասնակցիք ձեր օսկովը, ի ու ի կրնայ գոհացուցիչ նկատուիլ և ար-

առնուիլ անոր երկեցողութիւնը իբր միայն մինչեւ հիմա չինուած եռաձայններուն:

= Միւղիքը և արուեստը չափ ու սահման չունին պէտք է ըսել, այսօր Ձի ինկիրեանինը հաւնուած է և կերգութի, վաղը ուրիշ արուեստագէտ մըն ալ կը փորձէ ու տարբեր բօնի վրայ կը յաջողի եռաձայն մը կազմակերպել և կրնայ ըլլալ որ այդ վերջէն չինուածը նախորդը կը ջրէ իր արուեստագիտական այլազան նրբութիւններով:

— Դուք ալ զիտաւորութիւն ունի՞ք եռաձայն մը յօրինելու, դուք որ ձայնագրութեան մէջ այնքան վարժութիւն և համաբաւունքիք, չի՞ կրնար ըլլալ որ դուք ալ փորձէք անգամ մը, քանի որ արդէն այդ խնդիրը մրցման մէջ է:

= Ինչո՞ւ չէ, արդէն սկսած եմ այդպիսի աշխատութիւն մը, զոր պիտի մատուցանեմ մօտ օրէն պատկանեալ Յանձնախումբին ի քննութիւն:

— Լաւ, բայց ձեր ձայնագրութիւնները քննելու համար կը յուսա՞ք թէ գոյութիւն ունենայ կարող յանձնախումբ մը:

= Եթէ գտնուածները ընեն անանկ դիտողութիւններ՝ որոնք արուեստագիտական տեսակետով անտեղի ըլլան, այն ատեն տարբեր արուեստագէտներէ յանձնախումբ մը կը կազմանք և անոնց բովէն անցնել կուտանք, ինչ որ ալ աւելի վաւերական կըլլայ գործը:

— Ներեցէ՛ք հարցում մ'ալ եթէ կարելի է, եռաձայնի կազմութեան վրայ կրնա՞ք քիչ մը լուսարանել զիս:

= Եռաձայնին հիմը բուն իսկ եղանակն է այսինքն պատարագի երգեցողութիւնը, որուն վրայ կը յօրինուին պասը և ֆօնքո ալթօն. առէն եղանակ եռաձայն կամ քառաձայն կրնայ ըլլալ, բաւական է որ բաժանումները ճիշդ ըլլան և երգեցողութիւնը ներդաշնակ:

— Ձիւնկիրեան ինչպէս յաջողցուց իր եռաձայնը, ձեր կարծիքը ինչպէս է, երգեցողութեանց մէջ ներդաշնակութիւն կա՞յ:

= Գտնուածներուն մէջ էն յաջողն է և աշխատուածը, Ձիւնկիրեան արդէն քաջ ձայնագրութիւն գիտէ և բաւական վարժ է բառփխօնի մէջ, և ահա ինչո՞ւ ժողովուրդին ախորժալուր հանդիսացաւ իր աշխա-

տութիւնը, նա մասնաւոր դպրոցի դասը կազմուած է փորձ, ուշիմ և բանասէր անդամներէ, որոնք շատ գիւրաւ սովորեցան իրենց եղանակները ձայնի բաժանմամբ:

— Բայց իմացանք որ զձեզ պիտի հրաւիրեն եղէր Մէհտէրեանի և Չուհաեանի եռաձայններուն մասնակցելու համար, իրա՞ն է:

= Ինչո՞ւ կը զարմանաք, ես արուեստագէտ մըն եմ, կերթամ՝ ո՛ւր որ հրաւիրուիմ, առիկայ իմ գործիս կոչումն է, պայմանաւ որ ըրած կամ ընելիք զիտողութիւններս լսելի ըլլան գործին յաջողութեան և կատարելութեան համար:

— Բան մըն ալ հարցնեմ, Մսրըլեան մերցումը ինչ գոյն առաւ, կարծեմ ալ բան մը չէ՞ք դեր ալ դա մասին:

= Ա՛... Խօսիլը արծաթ է իսկ լուելը ոսկի, կըսէ առածը, դուք ինձմէ աղէկ գիտէք ելքը այդ խնդրոյն, որ տղայական դարձաւ վերջապէս: Արդէն առաջուց ընաւ միտք չունէի վեր հանելու խնդիր մը որ չէր արժէր եթէ բարեկամներ չստիպէին իբր արուեստագէտ իմ կարծիքս յայտնել Մսրըլեանի կարողութեան մասին, սակայն և այնպէս, շատ աղէկ եղաւ որ մրցումը տեղի չունեցաւ, քանի որ այն ալ մեր համայնքին զաւակն է, ան ալ ապրուստի պէտք ունի, և կը մտածեմ թէ՛ մարդ միշտ պէտք է իրմէ բարձրորուն հետ հակաճառի, մրցի, այնպէս չէ՞, հետաքրքիր ժողովուրդին առջեւ խնդիրը շատ պարզ է հիմա, երկուքս ալ ճանչցուեցանք, ես Սինանեան մ'էի և զարձեալ Սինանեան կը ճանչցուիմ, բայց Մսրըլեանի մը անունը մեր գրամարտէն միայն ճանչցուեցաւ... Թերթերու միջոցաւ:

— Շատ լաւ, զարձեալ միտք ունի՞ք մրցման մասնակցելու, եթէ Մսրըլեան պնդէ իր առաջարկին վրայ:

= Ներեցէ՛ք որ գործիս գլուխը երթամ, ժամանակը եկած է, ըսելով հրաժեշտ առաւ ինձմէ ու գնաց անցնիլ իր կազմած խումբին գլուխը, և իր ճպտոր շարժել mayestroի աթոռին վրայ:

Վ. ՓԱՓԱԶԵԱՆ



Այս թիւէն կը հրատարակենք անգլո-գական երգիծարան Բ. Յ. Պարոնիանի է՛ն յաջող գրուածները, «կեդիւլ» հետեւեալ երգիծական նկարագրութենէն, որպէս զի քոհացում տանք մեր զուարթախոհ ստուար ընթերցողներուն, իրենց հրամցելով հին բարբերու նմոյշներ:

ՀԱՆՈՒԻՆՔ, ՀԱՆՈՒԻՆՔ

Երբ ծով մտնել ուզեմ՝ առանձին կը մըտնեմ, ոչ զոք կուզեմ հետս, ոչ իսկ արեւն, որու հետ քանի մ'անգամ կուր ըրած եմ իզմէ առաջ մտած ըլլալուն համար: Մոլութիւն մ'ունիմ որ է. կուզեմ որ իմ ելլելու պահուս մտնէ արեւն կամ իմ մտնելու ժամանակս ելնէ: Քանի մ'անգամ միայն լուսնի հետ լուսնուած եմ: Ասոնց ալ ընկերութիւնէն բան մը հասկցած չեմ: Արեգական և երկրի աղջկան հետ կը սիրեմ եւ լոգանալ. Կրքեմն ալ Արուսեակի հետ կը մտնեմ ծով և ուրախ եմ թէ ճաշակս լիովին կը համաձայնի Աղեպիտի աշակերտաց կարծեացը:

Այո՛, շատ կը սիրեմ ծովն և եթէ հնար ըլլար ծովու մէջ ապրիլ՝ բնաւ չպիտի ելնէի ցամաք:

Բայց հերիք մեր անձին վրայ խօսեցանք: Հանուեցէք, Տեա՛րք իմ և Տիկնայք, քիչ մ'ալ ձեր վրայ խօսինք:

Լողացէ՛ք տեսնեմ:

Լաւ է լողալ ծովու մէջ՝ քան պարտքի մէջ:

Բայց զգուշացէք խղիւղելէ թէ միոյն և թէ միւսին մէջ:

Միջին դասու մարդիկ կամայ ակամայ լողալ կը սորվին, հարուստներն են որ կամ հարուստ կարծուածներն են որ իրենց տունը պանքս կընեն ... պարտքի մէջ, վախնալով որ չխղիւղին:

Մազ մնաց որ պիտի մոռնայի ըսել թէ՛ արարողութիւններ կան կատարուելիք ծով մտնողէն առաջ: Զգիթիւնք արանց արարողութիւններն կանանց արարողութեանց հետ:

Եւսերիոս աղան առաջին անգամ ըլլալով ծով պիտի մտնէ այս տարի: Իւր այս խորհուրդը կնկան կը յայտնէ: Կնիկը խրատ կուտայ էրկանն որ նախ և առաջ բռնկի հաւանութիւնն առնէ, զի մի գուցէ յետինն չար

քան զառաջինն ըլլայ: Եւսերիոս աղան կը հնազանդի, Հետեւեալ օրը կը ներկայանայ բռնկին որ կը հարցնէ.

— Ի՞նչ ունիք Եւսերիոս աղա:

— Ոչինչ, ծով մտնել կուզեմ:

— Ինչո՞ւ:

— Տկարութիւն ունիմ քիչ մը, ախորժակ չունիմ ուտելու:

— Շատ աղէկ կըլլայ, դեղ մ'ալ տամ քեզի:

— Տուէ՛ք:

Քանի մ'օր յետոյ Եւսերիոս աղան զենջակը թեւին սակ կը մտնէ ծովու բաղնիքին դռնէն:

— Հրամցէ՛ք Եւսերիոս աղա, հրամացէք, Եւսերիոս աղային օթեակ մը բացէ՛ք, լաւ օթեակ մը, լայն օթեակ մը:

Եւսերիոս աղան կը մտնէ օթեակը:

— Եւսերիոս աղային վարտիք մը տուէ՛ք լայն վարտիք մը:

— Ես դենջակ ունիմ.

— Դենջակը պարապ բան է, վարտիք հագէք որ հանգիստ ըլլաք:

— Ամօթ չէ՞ իմ տարիքիս ...

— Ամօթն ի՞նչ ըսել է, աս ալ նոր կը լսենք կոր:

Եւսերիոս աղան կարճ վարտիքով կը ներկայանայ հանգիստակա՛նաց:

Օթեակէն կեցնէ չեղներ դիտողութիւնները կսկսին.

— Աս ի՞նչ կսկոր մարդ է:

— Գոմէշ կը նմանի:

— Սըւոր թեւերը նայէ:

— Հապա ծոծրակը մեր քավիւնին չափ կայ:

Եւսերիոս աղան՝ որ կը լսէ բայց չսեղուկը զարնէ այս դիտողութիւնները՝ կամայ կամաց կը մօտենայ լողարանի սանդուղին, մէկ, երկու, երեք աստիճան կիջնայ, չորրորդ աստիճանին կանկ կառնէ:

Քաջալերական խօսքեր կսկսին ուղղուել իրեն.

— Եւսերիոս աղա, մի՛ վախնար մտի՛ր:

— Եւսերիոս աղա, նախ գլուխդ խօթէ վերջը ոտքերդ:

— Գլուխովը ի՞նչպէս քալէ մարդը...

— Մէկէն ի մէկ նետուէ՛:

— Վերէն վար ցատկէ :

— Վարէն վեր ցատկէ :

— Քովընտի նետուէ :

— Դուն ինծի մտիկ ըրէ՛, Եւսերիոս աղա, կռնակիդ վրայ նետուէ :

— Ատոնք պարապ խօսքեր են Եւսերիոս աղա, գլուխդ թրջէ՛ ու կամաց կամաց մտի՛ր :

Եւսերիոս աղա բնաւ չպատասխաներ այս ուղերձներուն, մերթ ընդ մերթ մէկ ոտքովը ջուրը քիչ մը կը քերէ և նորէն ետ կը քաշէ :

— Մտի՛ր, Եւսերիոս աղա, եթէ պիտի մտնես. հիւանդ պիտի ըլլաս :

— Ինչո՞ւ կը վախնաս կոր մա՛րդ, չե՞ս խպնիր, աղա՛յ ես ...

— Ինչո՞ւ կայներ ես հոն իշու պէս, կը պօռայ անդիլէն չափահաս մարդ մ'որ խօսքը չխնայեր բնաւ :

Եւսերիոս աղան կը ցնցուի :

— Ի՞նչ իրաւունք ունիս, կըսէ, անվաճել խօսք ընելու :

— Լռէ, իշու կտոր, չատ մի՛ խօսիր կը կրկնէ ուրիշ մը :

— Աս ի՞նչ ըսել է, մենք հոս լուացուելու եկանք թէ ...

— Բաղնիքի մէջ ասանկ խօսքեր ներելի են Եւսերիոս աղա, կատակ կընեն կոր :

— Ասանկ կատակ չեմ ուզեր ես :

— Երկար ըրիր ա՛, կըսէ չորեքտասանամեայ չարածճի մը և կից մը տալով Եւսերիոս աղային մէջքին՝ ջուրի մէջ կընկդմէ Եւսերիոս աղան : Քանի մ'անգամ Եւսերիոս աղան ոտները ու վարտիքը ցոյց տալէն ետքը դժուարաւ կը յաջողի կանգնիլ ջրոյ մէջ և լողարանի մէջ տեղը կայնելով կսկսի պոռալ :

— Աս ի՞նչ խայտառակութիւն է, ի՞նչ լրբութիւն է աս... մարդ չկա՛յ մի հոս...

Հանդիսականք կը խնդան :

— Ինչո՞ւ կը խնդաք կոր, ի՞նչ կայ խընդալու, ես ձեր խաղալիքն եմ, չէ՞ք ամչնար չէ՞ք խպնիր դուք :

— Քահ, քահ, քահ, քահ ...

— Ինչո՞ւ կը խնդաք կոր ...

— Քահ, քահ, քահ, քահ ...

— Տէր Աստուած, տէր մեղայ ...

— Քահ, քահ, քահ, քահ ...

— Փորձանքի պիտի հանդիպինք ...

— Քահ, քահ, քահ, քահ ...

— Ինծի ալ ըսէք ես ալ խնդամ ...

— Քահ, քահ, քահ, քահ ... :

Եւսերիոս աղան կը դողայ, ակռայներու կրճտումն կսկսի : Վերոյիշեալ չարածճին ջուրին տակ սուզուելով՝ կամացուկ մը կը մօտենայ Եւսերիոս աղային, անոր ոտքը վեր կը վերցնէ և գլխի վայր կը դարձնէ Եւսերիոս աղան որ իր բոլոր ճիւղը կսպառէ գլուխն ի լոյս ընծայելու համար :

Աւաղանի մէջ դանուողներն կսկսին խրենց ափով ջուր սրսկել Եւսերիոս աղային երեսը : Կը դողայ Եւսերիոս աղան :

— չէ... չէ... չէք ա... մչ... նա... նա... նա... նա...

— Աս ի՞նչ թօհաֆ մարդ է եղեր ...

— Վա՛յ աւանակ վա՛յ, կը դողայ կոր տէրուրս չելլար կոր ...

— Ես թօ թօ թօ ...

— Հա, հա, հա, հա ...

— Թօ թօ թօ հաֆ դուք էք ...

Պաշտօնական քահքահ մը կը թնդացնէ բաղանիքը :

Եւսերիոս աղան դողալով դողդողալով կիւնէ աւաղանէն և կապաւինի իւր օթեակը :

Բաղնիքանը կը կանչէ :

— Ի՞նչ խայտառակութիւն է աս :

— Ի՞նչ եղաւ, բա՛ն մը եղաւ, ըսէ՛ ոտքդ պագնեմ :

— Հոս չէի՞ր դուն :

— Հոս էի ... արժանապատուութեանդ դպան, ըսէ որ վրէժդ լուծեմ ... ես չեմ ուզեր որ բաղնիքիս մէջ անկարգութիւն ըլլայ, չահուս կը դպչի :

— Ձիմացա՛ր եղածները :

— Իմացայ, բայց վիրաւորուելու բան մը չտեսայ :

— Ետեւէս հրեցին ջուրի մէջ :

— Կատակ է անիկայ, իրարու կընեն ասանկ բաներ :

— Աւանակ ըսին ...

— Աւանակները ջուրէն կը վախնան տէատոր համար, ասոր մէջ բարկանալու քան չկայ :

— Երեսս ջուր նետեցին :

— Աւազանի մէջ կըլլայ ատանկ բաներ, նայէ հիմայ կընէն կոր:

— Այնչափ խնդացին վրաս:

— Վաղ անցիր, Աստուածդ սիրես, սիրտըս դող հանցիր, ես ալ կարծեցի որ դըպչելիք խօսք մը ըրեր են քեզի:

— Հսել է որ ասոնք դպչելիք բաներ չեն:

— Ամենեւին ատանկ բան մը մտքէդ անգամ մի՛ անցուներ. հէ՛մ լուրիշին ալ մի ըսեր, վրադ կը խնդայ:

— Շնորհակալ եմ տուած բացատրութիւններէդ. բայց աւելի աղէկ չըլլա՞ր եթէ հոս մարդ չգտնուած ժամանակը գամ ու լուացուիմ:

— Մինակ չես ձանձրանար նէ եկուր:

Եւսեբիոս աղան կը հագուի և կը մեկնի: Այնուհետեւ կսկսի ամէն առաւօտ կանուխ լուացուիլ:

Անցնինք այժմ կանանց կողմը:

(Մնացեալը յաջորդ քիւով)

Թ. Թ. ՊԱՐՈՆԵԱՆ

ՅԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ

ՅՈՒՋԻՉ ԿՏՈՐ ՄԸ

Սթրազպուրկի մէջ, նուագախումբ մը՝ որ Շօթէնի մեռելական քայլերգը կը նուագէր, յանկարծ, նուագողները դադարեցուն և տեղերնուն ելան՝ վերջին ծայր զգածուած՝ մինակ ցգեղով դաշնակահարը, որ ան ալ իր կարգին՝ տեղէն կ'ելլէ շատ յուզուած...: Իսկ ունկնդիրները, արդէն սրահէն մեկնած էին... սգաւորի տխուր դէմքերով: (Նուագահանդէսներ կան, ուրկէ հանդիսականները զգածուած դուրս կ'ելլեն, ինչպէս վերինը. չտեսանք արդեօք նուագահանդէսներ ալ, ուրիշ ժողովուրդը դուրս ելաւ թթուած դիմօք: Ծ. Խ.):

ԾԵՐ ԿԻՆԵՐՈՒ ՄՐՏՈՒՄ

Ամերիկայի մէջ ծեր կիները մրցումներով ժամանակ կանցնեն երբեմն: Բլէվէնտի մէջ ասոնցմէ տասներմէկ հոգի, ամենքը եօթանասնամեա և ութսունամեա խռփածներ... փոքր մրցում մը կազմակերպած են... արա-

գութեան: Շահողը (եօթանասունըութնոց կին մը) ժամէ մը և երեք քառորդէն, եօթը քիւլօմէթր տեղ զացած է... և մէկ երկու կինեք ալ որոնք քանի մը վայրկեան ետքը հասած են, անոնք ալ ութսուն և եօթանասունը հինգ տարեկան են եղեր...: (Հո՞ս ես Մարիցայ տուտու... դուն որ տէօչէկդ սէտիրին վրայ ձգել կուտաս՝ դիմացի սենեակը չերթալու համար. կարդայ տէ իպրէթ առ...: Ծ. Լ.):

ԿԻՆ ՄԸ ՈՐ ՇԱՏ ԹԵԹԵՒԻ Է...

Շիկակօի մէջ մեռած է կին մը՝ Մատամ Վիլիէմ Մօռ, որ 320 օխա կը կշռեր և ամուսնացած էր մարդուկի մը հետ որ ան ալ 350 օխա կուգար...: Այս կինը, եօթը տարիէ ի վեր, երբեք տունէն դուրս ելած չէր, սա՛ միակ պատճառով որ չէր սղմեր...: Տասը հոգի պէտք եղեր է՝ դազաղը փողօցին դունէն դուրս հանելու համար...: (Երեւակայեցէք այր և կնոջ ընտանեկան խռկիւռաբանութեանց պահուն՝ տեղի ունեցած ցնցումները...: Կուղէինք գիտնալ թէ, իրենց այս գիրութիւնը բնական էր, չէ թէ ամուսնութիւնը եարամիշ եղած, ասիկա բժշկական լուսաբանութեան կը յանձնենք... Ծ. Խ.):

ՏՈՒՆ ՄԸ ԵՐԱՌԻՐԻ ԲԱԺՆՈՒՄ

Մարդ մը ու զոքանչը, որոնք Միացեալ Նահանգաց մէկ քաղաքին մէջ կը բնակին, տեսան որ անտանելի կը թուի այդ միացեալ կեանքը. որոշեցին տունը երկուքի բաժնել. կիսեցին տունը. հիմայ դատուած կապրին, և երկու մասերուն մէջ տեղի միջոցը պարտէզի վերածած են...: (Ու ըսել թէ զոքանչները փեսանին կը սիրեն. քէյֆին էյի՛ մի... ատամընա կէօրէ: Ծ. Խ.):

ՋՈՒՐԻ ՄԷՋ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

Միսիսիփի գետը, անցած փետրվարին յորդած էր. Օհիօի մէջ ամէն տեղ ջուրը կոխած էր, նաև Սթանտարտի խմբագրատունը. բայց խմբագիրները առանց ընդմիջելու, շարունակած են իրենց աշխատութիւնները՝ քառուղիէ ոտնամաններ հագած և թերթը երբեք չէ յապաղած:



ԻՆՉՊԷՍ ԿԸ ԳՐԵՍ

Ճերմակ թուղթ, սև մելան, բարակ գըրիչ: Ասոնց անմիջապէս քովիկը թաս մը տուրճ — վարօ-դիփօ. բաքէթ մը օրկառէթ — երկրորդ տեսակէն. և մանաւանդ պզտիկ փունջ մը ծաղկի, եղանակի ծաղիկներէն — ահա՛ ինչ որ կը փնտռեմ ամենէն առաջ՝ գըրեւու համար:

Գաղափարներս՝ անկողնիս մէջ կը գըտնեմ... *faute de mieux*:

Վարդերուն և խանութներուն պէս, խելքըս առտունները կը բացուի:

Գաղափարներուն լաւագոյնները անոնք են զոր կէս գիշերէն ետքը յղացած եմ, քունս տանելէ առաջ: Յղացումներու համար, ըստ իս, պատշաճագոյն տեղը՝ անկողինն է: — *J'en sais quelque chose*, կ'ըսէր ինծի ֆըրանսացի բարեկամուհի մը, ընտանիքի պատուական մայր մը, որուն հետ գրականութիւն կը խօսէինք անցեալ գիշեր:

Գրելը՝ թէ՛ գործ մը և թէ՛ հաճոյք մըն է ինծի համար: Օրին մէկը կրնայ գործ մը ըլլալէ դադրել, բայց մինչև ետքը ճշմարիտ հաճոյք մը պիտի ըլլայ անիկայ:

Օրը օրին գրող մը, Աստուծոյ պատուէրին համեմատ, վաղուանը երբեք չեմ մտածեր: Եկող շարթուման գրելիքիս վերնագիրը այսօրուրնէ կրնամ գիտնալ, բայց ամբողջութիւնը երբեք:

Ինչպէս ամէնուն, նոյնպէս ալ ինծի համար ներշնչումի վրայ է խնդիրը: Ուղեղէս աւելի սրտէս կը բղխին գեղեցկագոյնները ներշնչումներուն:

Տարօրինակ թերեւս երեւայ, սակայն ճշմարտութիւնը սա է թէ արեւը, լուսինը, սոխակը, ծառերը, վտակը, բնութիւնը համակ տանկ ըսեմ, երբեք բան մը չեն ազդած ինծի:

Միւսէ, Վէրտի, Տիւմա Որդի, Բուլլիսի, Ֆրանսուա Բօրէ, օրինակի համար, շատ աւելի ներշնչումներ տուած են ինծի, քան գարնան առաւօտ մը, լուսնոտ գիշեր մը, փրփրադէզ ծով մը և ապուշ-ապուշ քնացող լճակ մը:

Երբ երկինք կը նայիմ, հովանոցս առնելու կամ չառնելու համար է. օր մը չեմ օգտուած անոր հմայքէն:

Անձրեւը՝ երկրին կեանք տուող, բերրութիւն առաջ բերող, երկնապարգեւ բան մը կը նկատեն ուրիշները: Ինծի համար՝ անձրեւը հեղուկ մըն է որ ցիւս կը չինէ: Եւ ըսել թէ մարդիկ կան որ ատոր վրայ բանաստեղծութիւններու հատորներ գրած են:

Նորութեան, յուզմունքի սիրահար՝ արեւը, լուսինը ու երկինքը կապոյտ, բան մը չեն ըսեր ինծի, որովհետեւ հարկը հաղար տարեներէ ի վեր միշտ միւնոյնն են և միւնոյնը պիտի ըլլան ասկէ ետքն ալ:

Ուրիշներ կը կարծեն թէ պատմութիւն մը ընելու համար նախ արեւին ճառագայթները և կամ դիշերուան պերճուհին նկարագրելու են: Ընտրող ալ չեն ձանձրանար:

Ասոնք օր մը միտքէս անցած չեն և ատոր համար է որ գրուածքներուն մէջ բնութեան տարրերը տեղ չունին:

Կեանքը, այդ ամէն օր փոխուող ճիւղալը այնքան առատ նիւթ կը մատակարարէ մեզի որ օղին, ջուրին նայելու ժամանակ չի թողուր:

Աղամ և Եւա նորածին բնութեան ծոցին մէջ գտան իրենք գիրենք, ըմբռնեցին ամբողջ հրապոյրը բնութեան, ուր ամէն բան թարմ էր և գեղեցիկ, սակայն նորէն տող մը ոտանաւոր չեն գրած: Կեանքին անուշութիւնը ուրիշ տեղ փնտռեցին անոնք և յանցանքը իրենցը չէ եթէ *en flagrant délit* բռնուելուն համար դուրս նետուեցան անկէ:

Աստուած ամէն բան տուած էր անոնց, բացի *paravant* մը որու ետին կարենային երգել ամենէն քաղցր բանաստեղծութիւններուն:

Փոխանակ երկնքի երեսը նայելու, կնկան մը երեսը կը նայիմ և կը փառաբանեմ զԱստուած:

Կնոջ մը, մանաւանդ սիրուած կնոջ մը դէմքին վրայ, արեւ ալ կայ, լուսին ալ կայ և բոլոր մնացածները:

Հետեւաբար, ես գրելու համար բնութեան չեմ դիմեր, ատոր համար թերեւս աւելի դրական եմ քան ուրիշներ:

Ուրիշին ըսածները կրկնելէ կը խորշիմ և կը ջանամ միշտ նոր բան մը ըսելու... թէեւ ամէն անգամ չի յաջողիմ:

Երկար յօդուած գրելը ընթերցողներուն

համբերութենէն բան մը գողնալ է ինծի համար:

Այն հաճոյքը զոր գրելու մէջ կը գտնեմ ես, կուզեմ որ ընթերցողս կարդալուն մէջ գտնէ: Ասոր համար է որ ընթերցողներուս և իմ մէջս մտերմութեան և համակրութեան կապ մը կայ:

Գործերուս ամենէն անաչառ, անկողմնակալ քննադատը ես ինքս եմ: Չի հաւանածներս ուրիշին չեմ հրամցներ:

Բաւական է որ նիւթ մը ունենամ գրելիս մէջ: «Ինչպէս պիտի գրեմ»ը մտքէս չանցնիր: Անգամ մը որ գրասեղանիս առջեւն եմ և գրիչը ձեռքս, իրարու ետեւէ կու գան գաղափարները. լիննալէն ետքը, անգամ մը կը կարդամ, եթէ հաւանեցայ՝ լա՛ւ, ապա թէ ոչ՝ կը պատռեմ:

Կեանքիս մէջ յօդուածի մը մաքուրը չեմ առած բնաւ:

Ամենէն դժուարը ինծի համար՝ յօդուածիս սկզբնաւորութիւնն է: Ձեռագրի թուղթերուս թիւ 1ը կրնամ քսան անգամ պատռել նետել. բայց առաջին էջէն գոհ մնալէս ետքը, թիւ 2ը և յաջորդները այդ վտանգէն զերծ մնան:

Երբեք մտքէս չեն անցնիր այն ընթերցողները որոնք կրնան յօդուածներէս բան մը չհասկնալ. *Tant mieux pour eux*.

Ընթերցողներս ինծմէ աւելի խելացի, աւելի ուշիմ, աւելի բանգէտ կը նկատեմ միշտ:

Ահա՛ ինչու երբեմն, նոյն իսկ ստէպ, ֆրանսերէն բառեր կը գործածեմ որոնք շատ մը գանգատներ առաջ կը բերեն:

Հայերէն գրելու համար միշտ ձեռքիս տակ ունենալու եմ Նուպարեանի բառարանը:

Պահեստի ձեռագիր երբեք չունիմ: Գրելուս պէս՝ չտպուելու է: Անհամբեր եմ:

Շողոքորթ *compliment*ներէ աւելի կը սիրեմ անկեղծ քննադատութիւնները:

Համոզուեմ չեղող բան մը գրի չեմ առներ: Նախանձառններէ չեմ վհատիր և հիացումներէ չեմ չփանար:

Ինծի համար գրելը հաճոյք մըն է, ըսի. և այսպէս պիտի ըլլայ որքան ատեն որ ուրիշներուն համար հաճոյք մը ըլլալէ չի դադարի գրածս կարդալ:

Գրականութեամբ *rentes* կարենալ շինելու պատրանքը չունիմ. բայց դրական ասպնջոյցներ ունիմ կարծելու թէ այսուհետեւ մեր լաւ գրողները մարդու պէս, կամ գէթ մանիֆաթուրանիներու պէս պիտի կրնան ապրիլ:


Պատուաւոր, անկախ արուեստներու կարգէն է գրականութիւնը, բժշկութեան, փաստաբանութեան պէս և ես աս հաւատքը ունիմ որ, մօտ ապագայի մը մէջ՝ մեր գրագէտները շատ փայլուն տեղ մը պիտի գրաւեն ընկերութեան մէջ.

Յ. ԱԼՓԻԱՐ

ՀՈԳԵՀԱՆԳԻՏՍ ԵՒ ՊԱՇՏՈՆ

Կիրակի օրը Գառը Գիւղի Ս. Թադաւոր Եկեղեցւոյն մէջ վայելուչ հանդիսաւորութեամբ հոգեհանգստեան Ս. Պատարագ և պաշտօն կատարուեցաւ տեղւոյն հանգուցեալ Արժ. Տ. Խոսրով Քահանայ Գալփաքճեանի մահուանը տարելիցին առթիւ: Պատարագեց Գեր. Տ. Ներսէս Ծ. Վ. Դանիէլեան, որ օրուան աւետարանէն հմտալից քարոզ մը խօսելէ ետք անդրադառնալով Տէր Հօր կեանքին, անոր պատուաբեր և օրինակելի քահանայութեան վարքը թուեց: Եւ չնշտելով այն առաւելութիւնները, որոնցմով սիրելի եղած էր հանգուցեալ Տէր Հայրը գիւղին ազգայնոց և իր ծանօթներու շրջանակին մէջ: Յետ աւարտման Ս. Պատարագի, հոգեհանգստեան արարողութիւնք յուղիչ ներգաշնակութեամբ մը կատարուեցան, հանգիստադրութեամբ Գեր. Տ. Տ. Ղևոնդ Դուրեան և Մեսրոպ Նարոյեան Վարդապետներու և Քահանայներու, մինչ Թադ. Խորրդոյ մասնաւոր կարգադրութեամբը Եկեղեցին համակ լոյսերով ողողուն խորհրդաւոր երեւոյթ մը առած էր:

Տ. Խոսրով Գալփաքճեան քննաքնիք կը փութայ իր շնորհակալութիւններն յայնեւ այն ամեն եկեղեցական եւ աշխարհական անձնաւորութեանց. որոնք հանգեցան պատուելի խաւսակը ցանկացեալ Արժ. Տ. Հօր քահանայութեան՝ քառասունհին եւ տասնիցի՝ բովանդակ օրջանին մէջ:



ԱՄԲԱԿՈՒՄԷՆ «ԷՍ-ՍԷ»ԻՆ ՔԱՐ

ՔԻԶ ՍԸ ՊԼՊԵՂ... ՔԻԶ ՍԸ ՇԱՔԱՐ...

*Ուր Ամբակում՝ կը ջըց-
նի էս-Սէին դէմ եւ
կը պաշտպանէ Անմե-
ռուկը:*

Քվ դու սոխակդ Ասաբազարի
Երբեք չի գաս դուն, աչի, նազարի...
Իմ Անմեռուկիս, կին մըն է գրկած,
Բայց այդ կինը դու՛ք բազմիցս է գրկած...
Արդէն ամեն բան, պատկեր մեզ աս կին,
Նոյն իսկ փորթերը ձեր՝ անցած Զատիկին:
Խեղճ կը զրկէի, դուք կին մը ցուցանի,
Ասանկէն՝ կազմեն ձեր կիներու ցանկ...
Կիներ, որոնք են, կամ կուզ եւ կամ չի
Որոնցմով թերեւս կը բաղձաք մաշի:
Մեր միտք բանին դուք շատ ծուռ առած էի,
Որ փոխան գեղեցկի, զգեւ կին ամէ.
Ուստի այս փոսթով, կը զրկենք ձեր կին,
Նոյն իսկ չենք դպած՝ իր փափուկ: Դեռ քին:
Առեք ձեր փոքր, սիրելիս էս-Սէ,
Դո՛ւք կրնաք զսպել, քան էի essai...

* * *

*Ուր Ամբակում, նոր կին
մը կուզէ Անմեռուկի
համար, որ օժտուած
ըլլայ. բայց կարդացի
որ հասկնաք...*

Պէտք է ձեռք ձրցել, մեր Անմեռուկին,
Բերնին համ տուող, մի աղուորուկ կին...
Անունը ըլլայ մաս-խազել Նեկսար,
Որ անոր խմցնէ սիրոյ քարն նեկսար:
Օրհորդ Նեկսարը չըլլայ թող փոսալ

Վարժուած չըլլայ, ամենուն փոսալ.
Կին մը, որ չուզէ, դասասու պարի,
Որ ոտքի դաս տայ, մեջքին ալ փարի.
Չուզէ դաւանակի վարպետ բոժեւոր,
Որ սիրաբանէ, ճի՛շտ միջեւ կես օր:
Կին՝ որ չերազէ, այլ սիփիզիզէ,
Որոնք տառապին... գեշ սիփիզիզէ.
Չունենայ երբեք, նոպա ջղային
Ձի բժիշկները... դարմանը նային...:
Չկարգայ երբեք, Ալիբար (Բրիգանթին)
Նսքը սեր կերգէ, մարդ մ'ալ բռնէ դէմ...:
Լոգանք բնէ մեջ կարի անարատ,
Կամ շաւքանայի հեղուկով առատ.
Բեհեզ շարժներու մեջը փաթուրի,
Տեսնողին աչիքն, հուրի թող թուի:
Նքէ ըլլայ երբ, ճիշտ ուզած ապրանք,
«Անմեռուկ» կզգայ, այն ասէն յափրանք.
Բայց պէտք է ըլլայ, նախ ջոշ միլիտանտ
Ապա քէ ոչ թուի՝ իր հոգին առ տեր:

* * *

*Ուր Ամբակում, առիթ զըս-
նելով, ինք ալ ինչ մը
իր վրայ կը խօսի...*

Բնաւ չեմ բռնուած, ես կնոջ մը կարեքն,
Վարպետութիւնը ճիշդ հոս է արդէն:
Երբ գրպանիս մեջ, ձայն հանէ ոսկին
Ինծի կայ պատաս, հոն կին կամ հոս կին:
Կիներ շատ թերեւ են մեյմէկ փետուր
Քրտակրդ պարպեն. աչիդ խրփէ տ'ւր,
Նքէ չես ինձ պէս, որ կնոջ մ'ընթացք,
Ունի իր համար, մեկ զատ դաւերթացք...:
Կինը նմանի շատ ասէն սարդի,
Որ խրմէ արիւն, խեղճ երեսասարդի.
Բայց շատ ասէն է՛ս, կրկն կեղծ մամուկ
Կամ վարպետ կասու, որ միշտ բռնէ մուկ:
Ես հոգի կուտամ, քարն եզան կողին,
Ինչպէս միշտ կուզեմ, լայն մեկ անկողին...
Բայց կին որ ելլայ դէմս, չըլլայ հպարտ, գեր
Ինձ բնէլ տայ վեր, պիտենէս պարսէր:
Ով որ պիտ' ըլլայ, «մասամ Ամբակում»
Անոր իզմեռուն պիտի տամ փակուն:

ԱՆՄԵՐՈՒԿ

ԳԻՆՈՎ ՄԱՐԻՑԱՆ

ԴԻՏՈՂՔ ՄԱՐԵՑԱՆ

(Շար. եւ վերջ)

Թէեւ ութ օր անցաւ մեր նախորդ թիւէն այսօր, սակայն նկարագրականը զոր կը շարունակենք հոս՝ կսկսի քսան եւ չորս ժամ վերջը, այն վայրկեանէն՝ երբ Միւսիւ Չուլ-թուլմազ չախրո քէյֆու մը մեկնեցաւ Յուսեփ աղայինց մօտէն իրեններուն համեմ-լու համար:

Այնպէս կըսեն՝ եւ կարծեմ թէ ճշմարտութիւն է թէ այն օգափոխները, որոնք կիրակի իրիկունները Բաղար-Պաշի բիացան պոյ չեն ցուցնէր՝ ետզլըն գացած չեն ըլլար: Բոլոր Եէնի-մահալէ գացողներ անպատճառ ջուրերէն դարձին հող՝ Հաճի Միսաքի դըստարանը պիտի նստին, ոմանք նստին, ոմանք ալ ինչպէս ըսի արնգակարկինով (°) պիտի չափեն չափչփեն՝ վար, վեր, աջ, ձախ, մինչեւ որ թռանվայի ձիւրուն պէս ոտքերնին ջուր ինչնայ ու բաշավալի պէս տուն ինան, պիտի պըլըն միւսիւ մը աչքիւրի, թուրքիկ պարոնի մը զրամիտ հարֆ-էնտաղուլիէն նմոյշներ տանելով մինչեւ ... անկողին:

Բաղար-Պաշի կիրակի երեկոյեան խրախճանութենէն համ առնելու համար նախ վարժուած ըլլալու է մարդ քառկա պիւքէն ըսուած յետին ծայր օղիին, գաւաթ կոտրելու աստիճան կառսօն կանչելուն, օձիքէն ներս ձերմակ թաշկինակ դնելուն համայիլ, անցնող դարձող կնիկը կամ աղջիկը ասդին նայել տալու սիսթէմին, եւ որ աւելին է՝ կառսօնին մէծիւ մը տրուած ժամանակ ուրիշներու աչքէն չվրիպեցնելու ճարպիկութեան: Այս առաւելութիւններով օժտուած մէկը ինչպէս կըսեն ռամկօրէն՝ ծուծը կրնայ հանել այն վայրին՝ որ Բաղար-Պաշի կանուանի:

Տիկին Մարիցա, որ սովոր էր ամէն կիրակի իր անպատկառ ներկայութեամբը պատուել Բաղար-Պաշի բիացան, իրիկուն մօտ

ըստ սովորականին հայելին դէմ պզտիկ ձեռքի խավրուով մը հապըռէ կաճըռէր դէմքը, մինչ օրիորդն ալ իր կարգին թուալէթովը կզբաղէր ուրիշ սենեակ մը: Դալով Յուսեփ աղային՝ պատուհանը նստած զըրպանի դրամները եւ նոյն իրիկուն բացառիկ ծաղքերը մտքին մէջ կը բաղդատէր, միշտ անիծելով չար բաղդը որ իր դէմը հանած էր խման կին մը:

— Հայտէ նայինք Յուսեփ աղա, ես եղայ դուն տահա կերերա՞ս կոր ... կը ձայնէ վերէն Տիկին Մարիցա քօռսածին մէջ թխելով մարմնոյն այն մասերը՝ որոնք կնոջ մը կիւլքեցեցէքները կանուանին:

— Տահա կանուխ է, կնի՛կ, աս վախթերթանք տէ իսկերմի մասա՞ պիտի չտկենք ... թող տուր հալիւ սանկ քիչ մը երկրիւն ընեն, ես չէյրէկէ մը կըլլամ ... կըսէ մարդուկը:

— Կիւլիւկ աղջիկս, գիտե՞ս ես, խաթ մը խաթ մը տահա քսուէ, դէրէ աս իրինկուն մէլթէմ կը փչէ կոր, երկուք մը սուռաթըդ հովին տաս նէ՝ ճէնկեառի կը դառնայ, դէրէ աս իրինկուն գործ ունինք կատարելիք ...

— Աման տուտուս, բէք ալ պօլ կը քըսեմ կոր նէ՝ ալուր կրող համալները կը դառնան կոր, դուն ինծի ձգէ ես խարերը գիտեմ ...

— Քիչ մըն ալ ինծի տուր տա բուտուս յէն, դէրէ հովէն խանդութ է սուռաթս տէ, լաճիվէրտ ֆիստանս ալ հագնիմ նէ խառախայիչ պիտի դառնամ ...

— Նա խուլթին վար կը նետեմ կոր, պապաս հազը՞ր է ...

— Ան հիմաճուկ կըլլայ, անոր հազըրութիւնը ինչ պիտի ըլլայ, տիպին բանթալօնը քաշածին կիպի եղաւ զնաց, մենք մեղ նա-

յինք, գիտե՞ս ես, աս իրինկուն ինչ պիտի ըլլայ նէ ըլլայ ...

— Աման տուտուս, ես հիշ յոյս չունիմ ես ... նէ իսէ :

— Ես պէճերուիմ տէ դուն ալ մատ խած, ամա Աստուած տայ ըռաստ գայինք ...

— Անոնք մութլախ Բազար-Պաշի են, տղան անանք չըսա՛ւ, երեկ իրինկուն ...

— Հա՛, հա՛, ծառքովս դրածիս պէս գիտեմ քի հոն կըլլան ամա՛ ըսնն ան է քի իրարու մօտ մասա իյնանք ... կըսէ Մարիցա, մէկ կողմէն հաղուելով ու քիչ ատենէն մայր և աղջիկ կը պատրաստուին, մինչ Յուսեփ աղան ալ իր կարգին գառնուկի մը հեղութեամբ արդէն հագուած վարը կոպասէր մեկնելու համար :

Ժամը տառն և մէկը քիչ մ'ալ կանցնի :

Տիկին Մարիցա «անլմանակ աղջկանս տէրն եմ» ի քօքօն քօքօն դնացքով, առանց կարեւորութիւն տալու ծուռ էօքէ սկաւորինն ճերմկածութեանը, Յուսեփ աղայի քովն ի վեր, աղջիկն ալ միւս կողմէն ճամբայ կիյնան դէպի Բազար-Պաշի, ուր սկսած էին դիմել բոլոր գիւղացիք :

— Ինծի նայէ Յուսեփ աղա, աս իրինկուն պաշխա վախթի չլմանիր, հա՛ ... քեզի ըսեմ, տիւմէնը իմ ծառքս պիտի տաս ...

— Զաթը կարգուածնուս պէրի տիւմէնը ո՞վ ծառք առած ունի քի, ուղածիդ պէս տառցուր ... ամա՛, տիխաթ ըրէ, սէրթ խուլլանմիչ չըլլաս, զէրէ բէք նարին է ... կը հասկնա՞ս ես ...

— Մարդ ասանկ խէրով քէութէյի պարտք խարճ կընէ քի կլոխ հանէ տէ՛ք, սըտեղը ի՞նչ պիտի ըլլայ, մէկին երկուք մասրաֆ տահա՛ ...

— Ըռախին չիչէնէրն ալ մէկին երկուք պիտի ըլլայ նէ, հիմակուընէ ըսէ քի անոր կէօրէ պիչիմի դնեմ գործը ...

— Անոր անտեղը գործը գիտէ, դուն մինակ էրքէկ տէյի քովերնիս գանուէ, անկէ անդին ինծի ձգէ ... ես ալ ատ բիճ խուռուսին չէլմիչ չընեմ նէ՛ ինծի ալ Մարիցա չըսեն ...

— Կընի՛կ, աղէկ ամա, ատանկ ալ մը օլթայիդ զարնելու խտար գիտնալս եսմ չիգայ քէսէյիս մէջը, չիւնքիւ ատանկ խաս

ծուկերը կարմիր եէմի կուգան, կարմիր ըլլալով ալ մէօհլըրիւ լեօժ մը կայ ճէպս ...

— Փարայի պէտքութիւն չունինք, Աստուած չէնեէյիս չիվիին խուլէթ տայ, դուն մինակ սէյիրճի եղիր տէ նայէ քի քու չի հաւնած Մարիցադ ի՞նչ պէճէրիկի կնիկ է եղէր ...

Մինչ այս մինչ այն խօսելով խօսակցելով կը հասնին քաղինօն պարտէզը, ուր խըռնուած էին արդէն կարգ մը զբօսասէրներ ու նուագածուաց խումբը սկսած էր դեղգեղել :

— Տուտո՛ւ, տուտո՛ւ, նա երեկ իրիկուանները նստեր են ...

— Սուս քա, պօղաղ ալանի պէս հիչէթներ մընէր ... ո՛ւր են, ո՛ր թառաֆը ...

— Նա տուտու, սա բէմպէ պուլուզալըն քովը, թաֆլաններուն տիպը ... աման տուտուս դող կեցում կոր ...

— Զէվզէ՛կ ... ինքիզինքիդ եկուր, հիմա կը դրոշմեմ հա, գող ելլալդ հոգս չէ, կը վախնամ քի ըռէնկդ կը նետէ, երեսիդ արունը կը փախի տէ մեռելիկս կերեւաս ...

— Աման տուտուս, կը դողամ կոր ...

— Լեզուդ խած քա՛ ... չըլլայ նէ պուտ մը թող տուր, աղէկ է, ան պիրտէն պիրէ սիրտդ հոգ ըրաւ ան է, հիմաճուկ կանցնի ըսելով, չիտակ քայլերը անոնց կողմը կառնէ, մինչ ասդին զիրենք տեսող մայր և աղջիկ իրարու կը փսփսան :

— Երկու աչկը քէօնայ, բիճ խուռուսին առջին ձգեր կուգայ կոր ...

— Ան թառաֆ մի նայիր քա՛ ... չեւլան քովերնիս գան ... Կանի անկրծակնութու կուգամ կը սրջիմ ստեղը կըսէ օրիորդը ... մինչ միւսիւ Բարսեղ, որուն աչքէն կայծակ կը ցայտէր :

— Օ՛ ... մեր ծանօթ տիկինը, օրիորդը, այս կողմը կուգան ... ինչ մեծ բարեբաղդութիւն ըսելով խնդում երես դէմք մը կը չինէ ու դէպի իրենց կը նայի ...

— Հա՛ ամա եավրում, հիմա պիչիմ չառնեմ հոս նստեցնին, զաթը ան կնիկը կը ճանչնամ, քիպիրին մէկն է, ելլաս տալէթ ընես տէ խապուլ չընելու ըլլա՞յ նէ պզտիկութիւն կըլլայ ...

— Ո՛չ ... այսինքն լաւ կըլլար եթէ մեր մօտը սեղան մը գրաւէին ...

Մինչ այսպէս կը խօսակցէին, անդին քիչ հեռուն պարապ սեղան մը գտնուող արդէն նստած էին անոնք ու բարեկները, գլխու շարժումներն ալ սկսած :

— Կը թոյլատրէ՞ք տիկին, որպէս զի երթամ վիզիթ մը տամ իրենց սեղանին կըսէ երիտասարդը տեղէն ելլալով :

— Ամա ինծի նայէ տղաս, չըլլալիք բաներ կընես կոր, հիմա հալիսը ի՞նչ կըսեն, նշանածդ ձգես՝ անոր թաղէ աղջկանը մասան երթաս նէ ...

— Բայց տիկին, ալաֆուանկային մէջ մեծ ամօթ է ծանօթ ընտանիքի մը չայցելելը ...

— Ալաթուռքային մէջն ալ ֆասլը կընեն, էկէր քի մենէ զատուիս տէ անոնց մասան երթալու ըլլաւ նէ, անոր համար տեղդ ծանրը նստէ, կըսէ մայրը դող ելած, և անիծելով չար բաղը որ իր գէմը հանեց զանոնք :

Նոյն ատեն կառսօնը Մարիցայենց մօտեցալով կը հարցնէ թէ ի՞նչ կ'առնեն :

— Պիղէ պիր չիշէ տիւզ կէթիր կըսէ տիկին Մարիցա, մէզէլէրտէ խալեար օլսուն, քութու սթաքօղը, պալըզ եռամուրթասը, տահա նէ վարսա իշտէ տիւզէթ տէ կէթիր, ու հազիւ թէ կ'առսօնը կը մնին՝ Յովսէփ աղան ոտքի ելլալով, բառտըսին աթոռին վրայ կը ձգէ ու չորս դին կսկսի նայիլ :

— Ա՛տ ինչ է Յուսէփ աղա ո՛ւր բարով :

— Հի՛շ, քիչ մը առաջ սըտեղը միւսիւ Խառալամպոսը աչքիս իլիշմիշ եղաւ տէ տնոր կը նայիմ կոր ...

— Ատ ո՞վ է հիմայ, նորէն ախապալ բէյտան կընես կոր ...

— Ախպապ բէյտան չեմ ըներ կոր կընի՛կ, փարայ բէյտան ընեմ տէյի սառաֆին կը նայիմ կոր, հիմայ հոս էր, երթամ տէ էօտիւնճ փարայ առնեմ, զէրէ աս գիշեր պաշխաթիւրիւ կը տեսնամ կոր գործը ...

— Սո՛ւս, տեղդ շնդուկէ, հիմայ խուռմիշ ըրած տօլապիս օթթան թիւյ պիտի տընկես ... նստէ տեղդ, ես գիտեմ կոր ըրածըս, թողածս :

— Ես ալ գիտեմ կոր քի, հէմ ալ անակ կերեւայ կոր, տահա ըռախին չեկած ծարերը թող տուիր, էյէր չիշէն տիպ ըլլայ նէ ի՞նչ բանայիր պիտի պոցուի աճապա ...

— Շիշէն տիպ ըլլալու ըլլա՞յ նէ, եկուր

քի ըսեմ (ականջն ի վար) տղան ալ մեր տիւզը պիտի մնայ ...

— Կնի՛կ, խելքդ կլոխդ պեր, ալէմին կիւլինճ կըլանք ...

— Էս ո՞նոնք կլոխ կլոխի տամ տէ ետքը ետեւուն նայողը թող խնդայ ... ասդին բեր սա ըռախին չիշէն քա Կիւլիւկ, ըսելով սպիսէն մօտը կը քաշէ և տանկլոխ մը լեցնելով առանց մկրտութեան վար կուտայ, յետոյ պոռալով :

— Սա՛ խալեարին վրան եազ ըրէք ճանրմ, ապուտառախոն ալ բէք հաստ են ճարթեր, Յուսէփ աղա սա խուրթի սառտէլանիին վրայ իլիմօն ըրէ ճանրմ ... ու աչքովը չորս դին նայելով կսկսի կատուի պէս լզուռտուիլ :

Հազիւ երկորդ գաւաթը կուլ տուած թէ չէ, կարծեցեալ փեսին կողմը դառնալով,

— Կենացդ եալրուս, խմէ՛ ... գուն ա՛նոնց մի նայիր, նայէ ես երկու հատը եռու վառլաթմիշ ըրի, աս ալ իւշիւնճիւն է ...

— Ձեր կենացը Տիկին, անուշ անմահու թիւն ... կըսէ տղան ու վեր կ'առնէ պիռայի գաւաթը, որ շատոնց ի վեր կենալէն սմբած էր փրփուրը ...

— Խերը տեսնաս քուրուկ ... իշկիճու թին ալ չունի եղէր, կըսէ տիկին Մարիցա, զոքանչցուին դառնալով, որուն դէմքը ծեր կնկան ստինք դարցած էր, դէպի վար կախուած :

— Շնորհակալ եմ ամա, կոնակս ի վար կը մսիմ կոր հոս, միւսիւ Բարսեխիկ սանկ խուլթու տեղ մը քաշուէինք ...

— Ա՛ ... երկու չիֆթ լախըռտըյով փեսադ խսխանմիշ եղար ... հա՛, հա՛, հա՛, չիւրիկ իլիմօն չէ քի ճէպս խօթում ... էյ սա խըյախ պան է ... ըսելով հատ մ'ալ կուլ կուտայ ...

— Ձէ ճանրմ ինչիս խսխանմիշ ըլլամ, անոնք իրար սիրեր կապուեր են, ֆախաթ ես կը մսիմ կոր տէ՞ ...

— Ինծի պէս եղիր ինծի պէս, նայէ, վարամ տէօրթ ... հատ մըն ալ կը ճնկէ ...

— Մարիցա ինքզինքիդ եկուր, աս քանի հատ եղաւ կնիկ, կելլաս կաւրուիս, կըսէ Յուսէփ աղան այլայլմէ եղած ...

— Ես պիտի աւրուիմ, աղջկանս գործը

պիտի չինեմ ... տահա ... դուք մի խառնուիք, ինծի նայե՛ք Կիւլիւկ, սանկ նայե՛ նույնիմ, սուռաթիղ սօլ թառափը կազին ընըխին բեր, բէք մուծը մնայեր ես, հէմ ալ երկու ծառքդ փորիդ վրայ բեր տէ պիր տիւզ կէօքսէրդ վեր պոնէ ...

— Աման տուտու, ինչե՛ր կըսես ...

— Անոր անտեղը ես գիտեմ, ինչ կըսեմ կոր նէ ան ըրէ, թէվէքէլլի ես խափեար մէզէ բերել չեմ ի տար, դուն թարիֆ ըրած պիչիմներս իճրա ըրէ, անկէ անդին ինծի ձգէ, ֆարազա հազար անգամ կոխս եկած պաներ են, ալթըխ ճուպ ճուր եղեր եմ, թէյզէյիս չորապի պէս կէս տիւզիւնայ փըտտածները ո՛վ կարգեց ... Մարիցան ... Յուսեփ աղա, խատեխս պօչ է, նայէ, տալեանձիի պէս առջիդ նայելուդ քիչ մըն ալ կնկանդը երեսը նայէ ...

— Կնկանս երեսը մէյ մը նայեր եմ ամա՛, քիր նայեր եմ ... ալ պագալըմ, գաջընձը օլտու, չիշէին մառքան կերեւայ կոր ալթըխ ...

Մինչ Տիկին Մարիցա կը ճնկեր յաջորդաբար սիլմի դաւաթները, ասդին միւսիւ Բարսեղ կատարեալ գործ կեփեր Կիւլիւկին հետ, որ ան ալ իր կարգին չէր դադրեր աչք յոնք շարժելէ, ըստ մօրկանը հրահանգին։

Միամիտ նշանածը անդին մեղրամոմի պէս կը հաւեր, բայց խեղճը պատուած չըլլալուն՝ չէր կրնար բառ մը՝ դիտողութիւն մը արտասանել, այլ միայն կը գոհանար մօրը բէշէն քաշելով։

— Էյ ինծի նայէ Բարսեղիկ, կուզեսնէ քիչ մընալ ասդին դառցիր, ֆարազա տաներեցիդ պսակածը չէր, մախսըմիս ալ մեղք է, մեզի համար հոգ չէ ամա՛, տեսնողները պաշխա միտքերու կերթան... կըսէ աղջկանը մայրը խըղըլի պէս կապուտ կապուտ ըլլալով։

— Հոգ չէ՛ տիկին մայր, շատ սէմբաթիս բռնեց տյո՛ ընտանիքը, ո՛րչափ չէն են, մանաւանդ որ ես ալ շատ կախորժիմ այդ բընոյթը ունեցողներէն...։

— Հա՛ ամա, եավըո՛ւս, չի նշանուած թող ախորժէիր, հիմայ ախորժիս չախորժիս պէտք է քի կոնակ ցուցունես, քանի որ քի վաղը մէկալնօր կնիկդ ըլլալիք աղջիկը ոս է, դէմն եապանձի կէնձ կայ նէ...։

— Բայց տիկին մայր, չէք գիտեր թէ որչափ սէմբաթիս բռնեց...։

— Սմբատը պոնեցնէ թող երթայ պոնէ, դուն ինչո՞ւդ պէտք մեր զէֆքը նայինք...։

Նոյն ատեն Տիկին Մարիցայ խոշոր հացի պատառի մը վրայ խափեար դնելով միւսիւն կերկնցնէ։

— Նա եավըուս պիր կէօրիւշ պիր պարըշ ամա, քեզսիդ վար չերթար կոր տէյի լոխմա մը կուտամ կոր...։

— Ախ շնորհակալ եմ տիկին, չարաչար աղնիւ էք... ըսելով կը կոտորտուի ու կառնէ ձեռքէն։

— Պէ կնիկ ինչո՞ւդ պէտք, զաթը թապախին մէջը նախաչի պէս քիչ մը պան կայ, գրիր իբրամ ըրիր նէ, մի՞նք ինչ պիտի ուտենք, կըսէ Յուսեփ աղան յօնքերը երկինք բարձրացնելով։

— Տօմաթէսին սալաթան չե՞ս տեսնար կոր, ես խափեարը հէլպէթ նիյէթով մը պերել տուի ..., չօգ չէ՛յ ... դուն սա չիշէն թագեցնել տուր ...

— Կընիկ աչքերդ բառլամիշ կըլլան կոր, հէրիք է ալթըխ ...

— Ինչ պիտի ըլլայ նէ աս չիշէյէն ետքը պիտի ըլլայ, ես գիտեմ կոր ըրածս թողածս, դուն մի խառնուիր, ըսելով կրկին անդին կը դառնայ և կսկսի խօսիլ միւսիւ Բարսեղին հետ։

— Անուշներ ըլլայ եավըո՛ւս, իլիկներդ եայըմիշ ըլլայ ...

— Ինծի նայէ խաթուն, խօսք կառնէ նշանած աղջկանը մայրը, ինքզինքէն ելած, ալթըխ չափը անցաւ, ամէն մարդ սըտեղը ըռզէկովը տուրկովը նստի քէֆ պիտի ընէ, ա՛ ... ա՛տ ինչ է, ալթըխ ... ամօթ կըսեն պան մը կայ ...

— Վա՛յ ... խըսխանձ օձերը կըո՛խ վերցուն ներսիդիտ, հա՛ ... քէֆիս թախտապուշը չե՞ս ես ... չօգ չէ՛յ ... թէփսիտէ խափեար, կէօնիւ տիր ուշեար ...

— Կը հասկընամ կոր միտքդ ամա՛ ... եաղմա չիգայ, անոնք կէս մը կարգած են սէպէ քի, հաց չիկայ կիւլիւմ, հաց չիկայ...։

— Բայց ներեցէ՛ք տիկին մայր, ինչ գռեհիկ խօսքեր են զորս կը փոխանակէք ...

կաղաչեմ, վերջ տուէք, հոս ամէն մարդ ազատ է զքօսանելու եւ ...

— Եւրոպայի զուէն տահա թոյ ես, չես հասկնար ամա, իմ կուլիսէս պաղը տաքը անցած լլալուն է քի ֆառղին կերթամ կոր եղածին իւէն ըլլալիքին ...

— Աս տեղը կարգած պիւէ կըլան կոր տէ, կէնէ սիրտերնուն սիրածը կառնեն կը նստին կոր, զահէ՛ր, ինչ ըսել կուզես կոր կըսէ Մարիցան տանկլոյ մըն ալ նետելով նոր բերուած շիշէն:

— Աման մայրիկ ելլանք մարելիք կուգայ կոր վրաս, կըսէ նշանած օրիորդը ոտքի ելլալով:

— Չորնամ եւրոպայ, արեւուդ սատկիմ, հայտէ ելլանք, զէրէ գործը պաշխալաշմիշ կըլլայ կոր ... ըսելով մայրն ալ ոտքի կելլայ, մինչ տիկին Մարիցա ինքն ալ իր կարգին հրահրուելով:

— Ճէհէլէմին պուճախը երթաք, ա՛ն մանչը հոս պիտի մնայ ...

— Դող կելլամ կոր տուտու, գետինը պիտի սրջիմ ... կըսէ օրիորդը ...

— Բայց տիկին, կաղաչեմ խնայեցէք ...

— Մէյ մը աղջկանը հալը նայէ տէ անկէ ետքը ճուղապ տուր, գիշերը լուսէ լուս աչքը չէ գոցեր եւրոպայ ... մէյ մը սանկ ալըճը կէօղիւով նայէ ... կըսէ նորէն Մարիցան, գաւաթ մըն ալ ճնկելէ վերջ:

Յուսեփ աղան խիպէն և ամօթէն դէպի ծովեզերք կերկնայ, մինչ ասդին կռիւը կը սաստկանայ ու բոլոր նստողները իրենցմով կը հետաքրքրուին:

— Իմ աղջիկս թեւի չանթայ էր քի խօլթուիւր զարկաւ տէ սօխախները տառցաւ, հէմ ալ պիտի առնեմ տէյի խօսք է տուեր, թեւերն ալ աղուոր մը սխմեր սխմեր ձգեր է...

— Աստուծմէ գտնաս դուն ճանաւար կընիկ, քար պերէր զաւկի տէր չըլլայիր, աս ծունեքը թէփէյիս չի պերէր ...

— Ան մանչը հոս պիտի մնայ, լեցուր սա խատէխը քա Կիւլիւկ ...

— Տիկին մայր դուք գացէք, ես տիկինը հանդարտեցնեմ յետոյ կուգամ կըսէ տղան, ան ալ իր կարգին շուարած:

— Հոս եկուր, դուն սանկ նստէ, անոնք

թող երթան, հիշ տէյիլ իսէ աղջկանս սիրաւ տեղը պեր ...

— Տուտու անոնց քովը մնալու ըլլայ նէ մէյ մը տահա սէմթերնիս չի հանդիպիր ... մի ձգեր, սատկիմ պիտի կըսէ նշանած աղջիկը մօրը թեւերը կամթեւով:

— Աստուծմէ գտնաս տէ լէշերդ բուռի հեմէն ճատալու, ըսելով՝ խեղճ ընտանիքը մայր և աղջիկ վրայէն ալ ծեծ մը չուտելու համար կը բաժնուին հոտիէ, հող ձգելով միւս սիւ Բարսեղը, որուն առած երեք հարիւր յիսուն դրուշին շուրջ կը դառնար բոլոր այս անտեղիութիւնները ու աղտեղութիւնները:

— Հա՛, թէփէնիդ փսխեցի ես՛, կառսօնը կը կանչէ ու ձեռքը մէճիտ մը տալով, խաղ մը կասպարէ, որ քիչ վերջ կսկսին գեղգեղել:

Եվիլիփ պաշա պէլա պիր պէօյիւփ վար պիր ֆիւշիւփ,

Շաքրսըմ պէն ցէյլիլիմ պիրի օպիրիցսէն շիփ Պանա Էօլիւմ Էագլաւսը ...

— Եաշա՛ ... ըսելով մինչ այսպէս յաղթանակը կը տանէր, արդէն ժամանակը չատոնց անցած և չատերն ալ ցրուած էին: Տղան կծիկը դրած էր արդէն ու քիչ վերջ երկու կողմերէն բռնելով տուն առաջնորդուող գինով Մարիցան, դիտող մարեցան:

ԼԻԼԱ

ԱՐՇԱԼՈՅՍ

Գոհութեամբ կիմանանք թէ Նորին Կայսերական բարեհաճ իրատէ մը, կարտօնէ Իզմիրի ազգայիններէն Բարսեղ Էֆէնտի Բէշիշեանի Արշալոյս անուն պատկերազարդ օրաթերթի մը հրատարակութիւնը:

Ի սրտէ կը խնդակցինք ու մեր ջերմ չնորհաւորութիւնները կը փութանք յայտնել մեր ազնիւ պաշտօնակցին:



ԵՍ ԳԻՏՑԱԾ ԿԻՆԵՐԵՂ ՉԵՄ...

Անցած երկուշաբթի, սոսկալի տաք կար, թերեւս մոռցած էք, բայց ես կատարեալապէս կը յիշեմ:

Պուլվառին վրայ, Տրուօ փողոցին անկիւնէն կին մը անցաւ, նոյն պահուն ես ալ կանցնէի. ձախ ձեռքը հովանոց մը բռնած էր, աջ ձեռքով՝ չրջագլխաւոր վեր առած՝ չիռչոտելու օրինական պահանջէն աւելի վեր:

— Եհ, գեղեցիկ ոտներ մը ունի...

Կինը ետեւը դառցաւ, շատ հաճելի դէմքով մը, կին մը որ կը դառնայ «մեղաց տէր» կին մըն է և այս ճշմարտութեան կարգանցած է այն օրէն ի վեր, երբ, Ղուտի աղջիկները ետեւին դարցած ըլլալուն համար՝ աղէ արձաններու վերածուեցան...

Կինը խնդաց, նոր նշան մը, հաւատարմութեամբ հրաժարուիմ ամօթխածութենէ: Կին մը որ կը դառնայ և կը խնդայ, այդ կինը կրկնապէս «մեղաց տէր» է...

Քիչ առաջ երթալով, նէ ընդունեց ինձմէ «քիչ մը բան առնել՝ որ զինքը պաղշկեցնէ»:

Հինգ վայրկեան ետքը, գիտեր թէ ինչ կը կոչուէի և ես ալ գիտէի որ Լիւսի կը կոչուէր և «չէր այն կիններէն զոր կը կարծէի...»: Կարեւորութիւն չէի տար այս վերջին մանրամասնութիւններուն:

Նէ համարձակօրէն կառքի մը մէջ մտաւ՝ որուն դուռը բաց բռնած էի, և նոյն իսկ թող տուաւ, առանց բողբոջելու, որ կառապանին հասցէ մը տամ:

Շանդէլիզէ ծառուղին օգտակարութիւն մը ունի որ ցից է. կրցայ զիս ապահովցնել, առանց երկար բարակի որ սր... ներք կը համապատասխանէին աչքերու տեսածին, և այդ միջոցին աչքերու կը հետեւէր ձեռքերս ալ, բայց, Լիւսի խնդալէ դադրեցաւ, և ոչ ալ լացաւ. այլ ձեռք առաւ անանկ միջոց մը որ ինձի կը հասկցնէր թէ, արդարեւ ինք չէր «այն կինը զոր կը կարծէի...»:

Այն ատեն, իրիկուան ժամը եօթը կար, և առաջարկեցի.

— Եթէ պուլվառին վրայ ճաշելու երթայինք Լիւսի...

— Ինչպէս որ կուզես, պարոն, պատասխանեց:

Կառքը Շանդէլիզէն վար իջաւ արագ գնացքով մը:

Ճաշեցինք, ճաշէն ետքը դեռ երբեք առաջացած չէի սկզբնաւորութենէս:

— Ձեզի կըսեմ և կը կրկնեմ՝ յայտարարեց Լիւսի, որ «ձեր կարծած կինը չեմ...»:

Բօշշուա Պուլվառին վրայ Լիւսի ապառնաց ինձի ստիկան մը կանչել, եթէ թող չի տայի որ մինակը երթայ իր տունը՝ որ մօտակայ փողոցի մը մէջ կը գտնուէր:

Սաստիկ բարկացայ:

Լիւսի, հանդարտեցնելու համար զիս, հետեւեալ օրուան համար ժամադրութիւն տրուաւ՝ օմնիւպիւսի կայարանի մը մէջ.

Հետեւեալ իրիկունը տարակոյսով մը գացի. արդեօք զիս խաբած էր.

Ո՛վ երջանկութիւն, Լիւսին հոն էր, ինձի կապառէր:

Ճաշեցինք, զբօսավայր մը գացինք. առջի օրուէն ա՛լ աւելի մեծ գումար մը կը մսխէի և դեռ արդիւնքը ճիշտ միւսնոյնն էր:

Վերջապէս, երէկ, Լիւսին գտայ սովորականին պէս օմնիւպիւսի կայարանը. մինակ, չափազանց ծախքերու երեսէն քսակս չորցած էր գրեթէ. Լիւսիին առաջարկեցի երթալ ճաշել պարզօրէն՝ Պուլյօն Տիւլալի ճաշարանին մէջ: Լիւսի տարօրինակ դէմք մը շինեց... բայց և այնպէս ընդունեց:

Փոթորկալից միջադէպ մը ունեցանք ճաշարանէն դուրս ելլելուն ատեն. ինչու որ շատ դժուարութիւն քաշել կուտար ինձի...

Լիւսի մեկնելու ուղեց և միւսնոյն սպառնալիքը ըրաւ:

Այն ատեն երբ իր խոստումը կը յիշեցնէի.

— Աստուած իմ, եզրակացուց, չորս օր կայ որ կը նեղուիմ կոր կրկնելէ թէ «ձեր կարծած կիններէն չեմ». և եթէ «ձեր կարծած կինը ըլլայի, ի՛նչ պիտի տայիք ինձի...»:

Ֆրանսեզէ

ՏԵՔՕԼԹԷ

Բերկրութեամբ կը ծանուցանենք թէ Մասիս գրական միակ շաբաթաթերթը որ դադարման ենթարկուած էր, Բարձրագոյն հրամանաւ վերսկսած է հրատարակուիլ: Մեր ջերմ շնորհաւորութիւնները:

ՓԱԼԱԳԱԾԵԱՆ
ԱՂԶՆԱՆՑ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԱՐԺԱՐԱՆ
ԼԵԶՈՒԱԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ
ԳԻՇԵՐՈՐԹԻԿ ԵՒ ՑԵՐԵԿԵԱՅ
Կ. Պոլիս, Գաջը-գիւղ, Մէօհիւրսար
հաստիսի .

Յրդ Տարեցան

Մասնագէտ ուսուցիչներու և ուսուցչուհիներու ձեռամբ, անհայտն ուսումներէ և գիտական անհրաժեշտ ծանօթութիւններէ զատ, հիմնական կերպով կ'աւանդուին Հայերէն, Օսմաներէն, Ֆրանսերէն, Անգղիերէն և Իերմաներէն լեզուները՝ հանդերձ խօսելով արժութեամբ (բռնիք), ինչպէս նաև Գծագրութիւն, Տնարարութիւն, Կար ու Ձև, Ասեղնագործութեան զանազան տեսակները (ձեռքով և մեքենայով), ձայնական և գործիական երաժշտութիւն, մասնաւորապէս Դաշնակ և Զութակ։ Գիշերօթիկները կը վայելեն կատարեալ սնունդ և ընտանեկան անթերի խնամք, առողջապահիկ պայմաններու մէջ։

Բանակցութեան համար գիմել ի վարժարան առ Տեսուչն կամ առ Տեսչուհին։ Մանրամասն տեղեկութիւն կարելի է ստանալ նաև, Դշ. Եշ. Շք. օրերը ժամը 5 և 9 գիմելով ի գրատուն «ԳԱՐՈՒՆ», Մեծ Նոր խան, վերի յարկ, թիւ 55։

Աշակերտահայ վերամուրը տեղի պիտի ունենայ Սեպտ. 3, Բշ. օր։

Հիմնադիր-Տնօրէն
Յ. Գ. ՓԱԼԱԳԱԾԵԱՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԹՈՒՂԵՐԱՆՈՒԹԻՒՆ

ԱՅՈՒ ՅԱԶՈՐԴ ԹԻՒՈՎ

Յ. Յ. ՊԱՐՈՆԵԱՆ

ԶԱԶԱ

ԲՕՊՈՒ

Յ. ԱԼՓԻԱՐ

ԳՌՈՇ

ԵԼ ԵԼ

ԼԻՂԱԷ յօդուած մը

գոր քառասունոցը ցնծացողը պիտի մարի...
գահգահներէ և

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԱՐԺԱՐԱՆ

ՊԱՐՏԻԶԱԿ

Վարժարանիս նպատակն է իր ուսանողներուն տալ քործնական կեանքի պահանջներուն համապատասխանող հիմնական և առողջ դաստիարակութիւն մը։ Բնիկ և Ամերիկացի ուսուցչական խմբին վրայ աւելցած է, Զուիցերացի ձեռնհաս ուսուցիչ մը՝ մասնաւոր յոյժ տալու համար նաև ֆրանսերէն լեզուն։

Աշակերտները կը վայելեն բժշկական և ընտանեկան կատարեալ խնամք վարժարանին մասնաւոր բժշկիկին, գիշերօթիկ հինգ ուսուցիչներու անմիջական հսկողութեան և Տիկին Զեմպրոսի մայրական խնամքներուն տակ։

Վարժարանին յառաջիկայ տարեշրջանը կ'սկսի Սեպտ. 4 ին (Ն. Տ.) Դշ. Գիշերօթիկներուն տարեթուական է 16 Օսմ. Ոսկի, որուն կէտը վճարելի է Սեպտ. քն սկիզբը, իսկ մնացեալը՝ Յունիսարի մէջ։ Գործիական երաժշտութեան դասին համար կը պահանջուի տարեկան մէկ ու կէս Օսմ. Ոսկի։

Թէ՛ հին և թէ՛ նոր աշակերտներ, եթէ կ'ուզեն Հայտարարապետէն կէս գնով ճամբորդել, պէտք է գիմել Գրեգոր Էֆ. Շահպաղեանի և իրենց անունները արձանագրել տան մինչեւ Օգոստ. 17։

Աւելի տեղեկութեանց համար գիմել Մր. Բիթի կամ Վարժարանիս Պոլսոյ գործակատար Գր. Էֆ. Շահպաղեանի, Պայպլ-Հաղա, Կ. Պոլիս, և կամ Տնօրէնութեան, Պարտիզակ, 10—4

ՀԱՅՈՒՂԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ

ԱՍՏԱԲԱԶԱՐ

Հայուհեաց Վարժարանին նպատակն է Հայ աղջիկներուն տալ լուրջ դաստիարակութիւն մը՝ զարգացած և բարեկերթ տանտիկիներ և դաստիարակութեան գործին օժանդակներ պատրաստելու համար։ Վարժարանին տեսչութիւնը աշակերտուհիներուն ֆիզիկական, իմացական և բարոյական զարգացումը միշտ խղճամիտ հոգածութեան առարկայ կ'ընէ։ Բնիկ և Ամերիկացի 12 ուսուցիչներէ կազմուած ձեռնհաս ուսուցչական խումբ մը կ'աւանդէ Հայ, Անգլ. Թուրք. և Ֆրանս. լեզուները. ինչպէս նաև ընական, իմաստասիրական, չափական և ոյլ գիտութիւններ։ Մնայուն կարուհի մը կ'աւանդէ ձեռագիտութեան, կարի և ձեռագործի դասերը։ Գիշերօթիկներու տարեթուական է 12 Օսմ. Ոսկի, որուն կէտը պէտք է հատուցանել տարեշրջանին սկիզբը, և կէտը ծննդեան արձակուրդին։ Դաշնակի և երգեսնի համար կը պահանջուի 5, 3 և 2 ու կէս Օսմ. Ոսկի, դասառութեան թիւին համեմատ։ Վարժարանին յառաջիկայ տարեշրջանը կ'սկսի Սեպտ. 11 ին (Ն. Տ.) Դշ. իրիկունը։

Աւելի տեղեկութեանց համար խնդրել վարժարանին յայտագիրը, կամ գիմել Մր. Բիթի, Պայպլ-Հաղա, Կ. Պոլիս, կամ գրել Տր. Ս. Էֆ. Գալաֆեանի, Ատեւադետ խնամակալութեան, Ատարազար։ 10—5

ՇԱԲԹՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

ԵՆՆԻ-ԳԱՐՈՒ. — Նախորդ շաբթուան լուրերու բաժնին մէջ Կ. Պոլսոյ չուկոյն գործաւորներէն զիւլպ մը ամենուն համակրանքը վայելող տիպար օրիորդի մը հասցէին ուղղած չարակամ տողերուն առթիւ կը փութանք ըսել իրեն թէ՝ ամէն գովելի առաւելութիւններով օժտեալ օրիորդ մը իրեն պէս մուրտ կատուններու չեն խտար, աղջիկ մը հետապնդելէ առաջ անգամ մը եմսաւ աշխատին նայելու է, ա' տիւտիւկ:

ՆՈՅՆ. — Նորակառոյց նաւամատոյցին տակը պահուըտող ու ճեղքերէն կանանց... վարտիկը դիտող ան միւսիւններէն կը խնդրուի որ զգուշանան... պաղ ջուրով պաննօ ըլլալէ: (Ամէն քան էրքէկի տիշիլի կըլլայ, քիչ մ'ալ էրկիմարդիկը դիտեցէք Ծ. Պ.):

ՍԿԻՒՏԱՐ. — Ներկայ ամսոյս մէջ տիրող տաքէն, իճատիէ, կարգ մը տուններու բնակիչները, կէս գիշերուն ճերմակ գիշերնոցով, բէրիններու պէս փողոցները կը թափառին:

ՆՈՅՆ. — Զիֆթիլիի գոսարանը դիմող կարգ մը ճէպիտէլիքներէն կը խնդրուի որ պէս զի չիչէ մը տիւզի համար, չափազանց ճախա չծախեն. ավարա ընելով սպասաւորները՝ ամեն վայրկեան: (Հետերնիդ սպասաւոր մը բերէք, աւելի հանգիստ կընէք միւս... Ծ. Պ.):

ԳԱՏԸ-ԳԻՒԴ. — Պզտիկ Մօտայի տէրը, իր առաւօտեան յաճախորդներուն հաճելի ըլլալու համար, Վեռսուէն մէկ քանի երկոտասնեակ ակնոց բերած է որպէսզի ուղածնուն պէս դիտեն ծով մտնող տիկիները և օրիորդները: (Թէք տիւլպին ալ ի հարկին Ծ. Պ.):


ԷՏԻՐՆԷ. — Հոս քահանայ խանէնտէ մը ունինք որ իր կարգին քար կը հանէ կոր խեղճ երիտասարդներուն. այս վերջինները գիշերը ցերեկին խառնած երբ կը սլքտան թաղէ թաղ պատուհաններու տակ հիօ-պիօի համար և չեն յաջողիր. առաջինը սակայն իւր արհեստին շնորհիւ կը վայելէ ամեն հաճոյք. մինչեւ լոյս ճնկելաբանութիւն ասոր անոր տունը, և այս ալ չքաւելով, ամառուան տաք օրերուն, թաղին ամբողջ մա-

րիա հօտը իր առջին ձգած, կերթայ բացօդէայ դաշտեր քիչ ընելու համար ֆօթօկլիկէտի:

ՄԱՔՐԻ-ԳԻՒԴ. — Կըսուի թէ, հոսկիւ մականու շողենաւի մը մէջ կարգ մը տիկիներ, փորձեր են բօյա մը գտնուի... Արդեօք քանի հոգիի ոտքի կոշտներուն վերայ կոխեցին այս տիկիները...:

ՍԻՐՔԷՃԻ. — Խօրասանճեան խոնի համբաւաւոր ճաշարանապետէն կը խնդրուի որ կամ հակափորը պզտիկցնէ, կամ իր ծակուրիկը լայնցնէ որպէսզի իր փափկածաշակ յաճախորդները հանգիստ ընեն...:

ԱՆՄԵՂ ԶԲՕՍԱՆՔ



Հոս նշանակուած կոճակները՝ սկսելով մէջտեղի սեւ կետէն այնպէս մը միացնել իւրարու որ առանց զիրար կարելու նոյն գիծը գայ հասնի մի եւ նոյն կետին ուրկէ սկսաւ Դիւրութեան համար կրնաք սոյն քապլօն ուրիշ թուղթի մը վրայ գծել ու փորձել, պայմանաւ որ ճիշդ լուծումը այս կտրոնին վրայ նշանակուած հասնի մեղ:

Ով որ մինչեւ գալ հինգշաբթի յաջողի, խմբագրութեանս կողմէ պիտի ստանայ եռամսեայ Հանրագիտակ:

Արտօմսէր ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԳՐ. Ե. ԱՍՍՏՈՒՐԵԱՆ

Պապր-Ալի Գաւաթի քիւ 52.

ԼԵԾ՝ Կ ԱՃԱՌԱՏՈՒՆ.

L U N G P E T T L I D S

Արանց, Կանանց եւ Տղայոց
ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ԶԱՓՈՒ ՎՐԱՅ

Գ. ԷՐՄԷՆԵԱՆ ^և ԸՆԿ.

4. Պոլիս, Սուլթան Համալ, Թօփալեան խան
Սոյն վաճառատունը, որ տարիններէ
ի վեր իր ուղղութեամբ, ապրանաց
տոկունութեամբ և գիններու անմրցելի
աժանութեամբը չահած է բոլոր իրեն
գլխաւոր յաճախորդաց վստահութիւնը,
այս անգամ ձմեռուան յատուկ ընտիր
հազուստներու, կանանց բեղուններու
և տղայոց չիք և գլխացկուն փոքրու-
ններու ճոխ մթերք մը պատրաստ ունի,
որ ջերմապէս կը յանձնարարուի ամէն
անոնց, որոնք պէտք ունին ներկայ
եղանակին հազուստի և ուրիշ նման-
ոքինակ պիտոյից։

Սակարկութիւն չկայ, թիւը 2 դրչ. է:
Գաւառներէն յանձնարարութիւնք
փութով կը կատարուին: 50—48



ԱՌԻԹԷՆ

ዐዓደባዊነት

ՓՈՒԹԱՅԷՔ ԳՆԵԼ

4. ԵԱՎՐՈՒԵԱՆ

Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆԻ

Ճեռու պէջ իւանիկ
սակ

Թէյի մեծ վաճառատան թէյերը,
որը ուղղակի ներածուելով Սեյրանէ,
Ջինասսանէ, Հնրխասսանէ, Ճալաէ եւ Ճա-
րոնէ:

Ամենէն գլուարահաճներն իսկ կըր-
նան գոհանալ թէյերու թարմութեամբ
հոտովն ու համովր :

Փնտռեցէք մանաւանդ իրենց յատուկ խառնուրդները, որք կը ծախուին մեծ և փոքր քանակութեամբ :

Ուշադրութիւն մարտային :

Ա Պ Ա Ռ Ի Կ

Ճ ԱՄԻՍ ՊԱՅՄԱՆԱԺԱՄԷՆ ՅԵՏՈՅ ԱՆՊԱՅՄԱՆ ԱՊԱՌԻԿ
15000Է ԱԻԵԼԻ ՏԵՍԱԿ ԻՐԵՂԵՆՔ 5000

Տեղական և Բարիդի 14 և 18 աստիճան ոսկւոյ վրայ բազմատեսակ գոհարեղէններ, օղ, մատնի, ասեղ, հայլն. նաեւ անուններու սկզբնատառով գոհարազարդ մատանիներ, ոսկի, արծաթ ժամացոյցներ և նորաձեւ շղթայներ, ասոնցմէ զատ ամէն եղանակի յատուկ պատրաստ և չափու վրայ դգեստներ, կօշիկներ ու զլխարկներ, արանց, կանանց և տղայոց համար: Նաեւ մուշամպա վերարկուներ, բուրդէ և մետաքսէ չըջագգեստի կերպաններ, պատրաստ ճերմակեղէններ նաեւ խասա, ամերիգան, պասմա, եւայլն. և զարդի վերաբերեալ պիտոյք, մեքենաներ՝ լուացքի, լուսանկարի, կրամօֆօն, ինչպէս նաեւ կարի (ձօնա. Նովման) ևայլն:

Ունինք նաեւ եւրոպական նուրբ ճաշակով պատրաստուած կահ կարասիք, հիւրանոցի, ննջասենեակի, ճաշարանի և խոհանոցի վերաբերեալ ամէն իրեղէնք, ամէն տեսակ վառարաններ, նաեւ բաղնիքի, խոհանոցի եւրոպական շարժուն օճախ ևլն.:

Վաճառատունս իր տեսակին մէջ միակն է որ չահած է հանրութեան վստահութիւնը, գնահատուած է նաեւ իր ապրանաց տոկոսնութիւնը, նրբութիւնը և աժաճութիւնը:

ՍԱԿՍՐԿՈՒԹԻՒՆ ԶԿԱՅ

Կանխիկ գնողներու համար հարկւրին 5 զեղչ

Շաբաթական և ամսական վճարմանց համար հաւաքիչներ միշտ պատրաստ են:

Հաճեցէք գիմել ՀԵՐՃԱՅԻ վաճառատուն

ՄԵԾ ՇՈՒԿԱՅ ՈՍԿԵՐԶԱՅ ՄԵԾ ՓՈՂՈՇ ԹԻՒ 13

50—37



ԲԵԻԵԼՔ

ՕՐԱ-

ԹԵՐԹ ազգային, գրական եւ հաղափախան:

— Բաժանորդագրութիւն՝ տարեկան Կ. Պոլսոյ համար 80 դրուշ, գաւառներու համար 108 դրշ. և օտար երկիրներու համար 35 ֆր.: Զեւքէ վաճառում՝ քաղաքի փարա: Հասցէ՝ Ղալաթիա, Բամանտօ փողոց: ԱՐԵԻԵԼՔ հրա լարակ կ'ելլէ ամէն օր, կէս օրին, խրնաճեալ բովանդակութեամբ, ընտիր յօդուածներով, թարմ լուրերով ու նորագոյն անդեկութիւններով:

ԱՐԵԻԵԼՔ, իր վերակազմուած խմբագրութեամբ և իր կարող աշխատակիցներ

րով, առաջնակարգ տեղ մը կը գրաւէ անդական հայ մամուլին մէջ, որ աւուր տւելի հրապուրիչ գառնայով՝ նորանոր բարեօրոժներու շնորհիւ զօրս ներմուծած է թերթին մէջ: Իր առաւելութիւններէն մէկն է ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ըլլալու հանդամանքը, որով իր ընթերցողներուն կը ներկայացնէ պարբերաբար: Ծանօթ Դէմքեր և երբեմն ող նուաբաններ: Ոչ նուազ կը գնահատուին իր մասնադիտական յօդուածները, ևկեղեցական, կրօնական, անտեսական-սեղանաւորական, երկրագործական, իրաւաբանական եւայլն, բաց ի դրական, բանասիրական գրութիւններէ, օրուան տեսութիւններէ ու Զուարթնօթիւրէ, որոնք նիւթերու ճօխ պէսպիսութիւն մը կը կազմեն: